

633.1

Ղ-45

11753 Ա. Գրայ.

ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄՐՈՒԹԵԸՆ

Изд. Б. А. К. Союза.

Եղբ. Մայիլեանների նպաստով.

Հրատարակչական Մասնաճիւղի	№ 9.
Издательской Секцій	№ 9.
Ժողովրդական Գրքերի շարք	№ 7.
Народная Библиотека	№ 7.

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ

ՄԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Գեորգ Ղարազեօզեանցի

Грядковая Культура хлебовъ

Г. Гарагеозянца

Б А К У

Типографія Н. А. Эриванцова.

1909 г.

ԿՈՒԼՏՈՒՐԱ

18733

6331

24 SEP 2010

ՀՐԱՏ. ԲԱԳԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Եզր. Մայրիկեանների նպաստով.

Հ Ա Յ Ա Հ Ա Տ Ի Կ Ն Ե Ր Ի
ՄԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

630
69-ՂԱ



1003
10710

Մէկ հատիկից ստացած բոյսը 33 հատիկով—30-ական հատիկով
ընդամենը 990 հատիկ:

19 JUN 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՊՁ-ԲՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՐԱՆ»

ԿՄ ՆՈՐ ՁԵԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Աչքի առաջ ունենալով մեր կատարած այս նոր ձևի յաջող փորձը Ալեքսանդրոպոլում և Ռուսաստանում՝ հարիւրաւոր դեսեատիններից արդէն ստացւած արդիւնքները, կատարելապէս վստահ, առաջարկում ենք հայ երկրագործ ժողովրդին փորձել, հացահատիկները մշակել այս նոր ձևով, որը տալիս է մէկին 500—1000, իսկ մէկ դեսեատինը տալիս է 200—500 փութ:

Հացահատիկների նոր ձևի մշակելն այնքան հեշտ է, այնքան հասարակ, որ մինչև անգամ 10—12 տարեկան երեխան կարող է կատարել: Յորենի ամէն մէկ հատիկի հետ խաղալը, ամէն մէկ թուփի տեղափոխութեան դժւարութիւնները չպիտի վախեցնի այս գործով զբաղւողին: Սկզբում, մանաւանդ տեսականապէս, այս սխտեմը դժւար և անգործադրելի է թւում, բայց փորձը հաստատում է, որ դա շատ հեշտ իրագործելի է: Թէ հատիկ-հատիկ ցորենի ցանելը,

յարմարեցրած գործիքներով, թէ շիթիլի տեղափոխութիւնը շատ հեշտ բան է և կատարելապէս գործադրելի, մանաւանդ, երբ սովորական կ'ըզուանս և այն ժամանակ փոքրիկ հարաբարձնից ու քիչ ծախսով և աշխատանքով, կ'ստացւի մեծ արդիւնք:

Պէտք է նկատի ունենալ, որ հացահատիկների այս նոր ձևի մշակութիւնը, գրեթէ շուրջէ պահանջոււմ, այնպէս որ հեշտութեամբ կարելի է գործադրել մեր երկրում, որը ջրերով առատ չէ:

«Մարգային Կուլտուրան» նոր բան չէ:

Հագարաւոր տարիներ առաջ Չինացիք դտել են այդ միջոցը և գործադրում են, մինչև այսօր: Այդ միջոցն է սիրել հողը և աշխատասիրութեամբ մշակել: Այն օրից, երբ մարդկութիւնը սկսել է հացաբոյսերի նախնական մշակումը, բոլորովին անուշադրութեամբ է վերաբերւել բոյսերի արմատային սխտեմի զարգացմանը և աւելի հետաքրքրւել է բոյսի վիայն պտղատու մասով. ուստի ի վրաս արմատների, աշխատել է այդ մասը շահագործել, այնպէս որ դարերի ընթացքում հացաբոյսի արմատը, այդպիսի աննպաստ պայմաններում, բաւականաչափ նւազել է. սակայն նա մեծ եռանդ է ցոյց տալիս աճելու և ուժեղանալու, երբ նրա գոյութիւնը նըպաստաւոր պայմանների մէջ է դրւում, երբ

մարդը օգնութեան է հասնում իւր խելացի միջամտութեամբ և նպաստում է նրա ուժեղ զարգացմանը:

Պարզ է, որ ուժեղ արմատը կտայ ուժեղ բոյս: Այս կրողութիւնը Չինացիք առանց ուշադրութեան չեն թողել: Նրանք իրանց վաղեմի փորձաութեամբ նկատել են, որ տեղափոխելը (շիթիլ անելը) խախտելով բոյսի հանգիստ դրութիւնը, արթնացնում է նորա աճելու և ուժեղանալու եռանդը, նպաստում է բոյսին նոր արմատներ տալու, ուժեղացնում է արմատների կապակցութիւնը—հետևաբար և բոյսի ուժեղ զարգացմանն ու արդիւնաւէտութեանն է նըպաստում:

Չինացիք հացաբոյսերի այդ յատկութիւնը յաջողութեամբ շահագործում են, ընդունելով տեղափոխելը—շիթիլ անելը—իբրև այդ բոյսերի մշակման ամենաճիշտ ու շահաւէտ միջոցը:

Ունենալով շատ քիչ հող, Չինացին բաժանում է իւր փոքրիկ արտը մարդերի (լաքերի) և մշակում է այնպէս, ինչպէս մենք չենք կարող մշակել նոյն իսկ մեր բանջարանոցները (բօստան): Նա սիրում է իւր հողը և մեծ աշխատասիրութեամբ ու խնամքով է մշակում:

Այդ է պատճառը, որ հողն էլ նորան փոխադարձաբար առատ վարձատրում է, այդ է պատճառը, որ նա քաղցած չէ մտում:

Այժմ մենք հասել ենք այն դրութեան, որ այլևս մեր գործադրած հանցաբոյսերի մշակելու նահապետական եղանակը անկարող է բաւարարութիւն տալ մեր հացի պահանջին. պարզ է, որ հարկաւոր է կամ փոխել մշակութեան ձևը, կամ մեծացնել հողաբաժինը. բայց քանի որ հողաբաժիններ մեծացնելը մեզանից չէ կայրւած, ուրեմն մեզ մնում է փոխել մշակութեան ձևը: Չինացին, գործադրելով մարգային կուլտուրան, մեր գիւղացուց աւելի փոքր հողաբաժին մշակելով, երբէք հացի պակասութիւն չի ունենում, ուրեմն մենք էլ մեր հողի բերքը ապահովացնելու նպատակով, պէտք է օրինակ վերցնենք այդ վաղեմի փորձառու աշխատասէր ժողովրդից և սկսենք այդ կուլտուրայի գործադրութիւնը սովորել ու մեր գիւղերում տարածել: Ամէն մի նորաձևութիւն, մանաւանդ երկրագործականը, դժւարութեամբ է մտնում և ընդհանրանում ժողովրդի մէջ: Այդ նորաձևութիւնը ժողովրդի մէջ մտցնելու համար—նորա օգտակարութիւնը պէտք է ապացուցանել ակնյայտնի կերպով, ուստի ամէն մի ինտելիգենտ մարդու բարոյական պարտականութիւնն է—մարգային կուլտուրայի փորձեր անել: Այդ փորձերը կատարել են Ռուսաստանի զանազան տեղերում 1907 և 1908 թ. այժմս էլ շարունակում են և փորձերից ստացւած արդիւնքը եղել է բաւա-

րար, որը ենթադրել է տալիս, որ մեր հողն էլ կարող է առատ բերք տալ, եթէ բարեփոխենք մշակութեան ձևը:

Ահա մի քանի տեղեկութիւններ այդ փորձերի մասին: 1) Կարտամիշեվը հինգ տարի շարունակ Մօսկւայի մօտ ցորենի նորածիլ բոյսեր տեղափոխելով (կաղամբի պէս շիթիլ անելով) մէկ դեսեատինից ստացել է 380—390 փութ ցորեն: 2) Պ. Զուեվը 1906 թ. շիթիլ է արել կէս դեսեատինի վերայ և ստացել է 180 փութ, այսինքն 1 դես. 360 փութ. ծախք է եղել կէս դես. վերայ 22 ռուբլի: Այս փորձը եղել է Չերնիգոլսկսեայ նահանգում: 3) Ալիան Շերբնակիյ Շանյանտովը մի տեղում ստացել է 40 փիթի փոխարեն 120 փ. փոքրով (0.0005): 4) Այադիմիրում Կիրովիինը անագոս, անմշակ հողում 140 հատիկից, որի քաշը եղել է մէկ մսխալ, ստացել է 159,024 հատիկ, այսինքն 10 Ֆ. 19 մս. հաճար:

Եղել են փորձեր և մեր հովիտում: Ալէքսանդրօպօլում այս տարի Ապրիլի 13-ին մենք ցանեցինք ամենավատ, աւագոտ սպիտակ հողում հասարակ տեղական զարի, որի 12 ծիլերը, ցանելուց 3 շաբաթ յետոյ, շիթիլ արինք: Այս 12 շիթիլից յուլիսի վերջին ստացւել է 12 թուփ, որոնց ամենափոքրը ունէր 20 հասկ և ամենամեծը 33 հասկ և ամէն մի հասկի մէջ 28—30 հատիկ. ուրեմն 12 հատիկից ստացւել

է մօտաւորապէս 7200 հատ. այսինքն մէկին 663:

Հազարաւոր այսպիսի փորձերի մասին տեղեկութիւններ կան „Урожай“ շաբաթաթերթում և Դեմձինսկու „Обезпеченность урожая. Теория и практика грядковой культуры хлебовъ“ գրքոյկում: Ահա այդ բոլոր տեղեկութիւնների հիման վերայ կարելի է ապացուցանել, որ այդ եղանակով մշակելով մի հարիւր քառակուսի սաժէն հող, որի համար բաւական է 1 ֆունտ սերմ, մի այլի կին հեշտութեամբ կարող է կատարել բոլոր պահանջելիք աշխատանքները և ստանալ մօտ 25 փութ արդիւնք:

Հացահատիկների մշակման հետ կապած ամէն մի նոր ձեռնարկութիւն, ստում է Դեմձինսկին, միայն այն ժամանակ կեանքի մէջ կրմտնի, երբ նրան գործադրելու կեննեն հազարաւոր գիտակից և իրենց առ հայրենիքն ունենալիք պարտականութիւններն ու շահերը հասկացող աշխատաւորներ:

Ուրեմն առանց վհատելու աշխատենք այդ հանրօգուտ և մեծ նշանակութիւն ունեցող գործը առաջ տանելու:

ՀՐԱՀԱՆԳ ՄԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՂՏՈՒՐԱՅԻ:

Մարգային կուլտուրան բաժանուում է երկու տեսակի. ա) երբ հացահատիկները մի առանձին տեղ ցանում են և երեք կամ չորս շաբաթից յետոյ տեղափոխում (շիթիլ անում) նախօրօք պատրաստած մարգերում. բ) երբ հացա-

հատիկները մէկը միւսից որոշ տարածութեամբ հեռու ցանում են մարդի մէջ և այլևս չեն տեղափոխում, այլ որոշ ժամանակամիջոցում բոյսերի ստորին մասը հողով ծածկում են (բուզը լցնում են):


Առաջին եղանակը գործադրելի է փոքր հողաբաժինների համար, մէկ կամ երկու դեսեստինի վերայ, իսկ երկրորդը կարելի է գործադրել և տասնեակ դեսեստին հողի վերայ:

Ա. ՇԻԹԻԼԻ ՁԵԻԸ.

Բոյսի զարգացման համար հարկաւոր նիւթերը հողից ծծում է արմատը, ուրեմն բոյսը այն ժամանակ կարող է զօրեղանալ, աճել և լաւ բերք տալ, երբ կունենայ ուժեղ և լաւ զարգացած արմատ: Ձանազան բոյսերի կուլտուրան ցոյց է տալիս, որ բոյսի տեղափոխելը նպաստում է արմատի ուժեղ զարգացմանը: Հետևապէս տեղափոխելը պէտք է նպաստէ և հացաբոյսի աճմանը: Հացահատիկը, երբ սկսում է ծլել և ծիլը հողից դուրս է գալիս, այդ ժամանակ արմատից մի փոքր բարձր, հողի մակերևոյթից դուրս, ցողունի վերայ գոյանում է մի փոքրիկ հաստութիւն (ծղնոտի առաջին ոստը), որի երկու կողմից սկսւում են երկու տերև, այդ տերևների ծոցում լինում են երկու բողբոջներ, որոնք դեռ ևս քնած են և հազիւ նկատելի. այդ սկզբնական զրութեան միջոցումը

եթէ բոյսը հանեն տեղից և նորից տնկեն մի փոքր աւելի խոր՝ նախկին նստածից, այսինքն այնպէս, որ ոտոր մէկ վերջով խորը լինի հողում, այն ժամանակ բոյսը իւր հողում եղած ոտից կտայ նոր արմատներ, իսկ քնած բողբոջները կտան նոր ցողուններ: Նոր արմատները լինում են աւելի ուժեղ և տալիս են բոյսին աւելի նիւթ, որով բոյսը աւելի է աճում և զօրեղանում:

Փորձը պէտք է սկսել այսպէս. փորձին յատկացրած հողաբաժնի համաձայն վերցնում են մի առանձին հողաբաժին (մարդ), որտեղ և ցանում են սերմը, կամ սովորական ձևով, կամ աւելի լաւ է, տնկելով հատիկները մէկը միւսից մի վերջով հեռու: Սերմը հատիկ-հատիկ տնկենկ. 1.




լու համար, շատ յարմար է բաժանել մարզը

շերտերի, որոնց երկարութիւնը լինում է կամաւոր, իսկ լայնութիւնը 12 վերջով. այդ շերտերը բաժանւում են միմեանցից 6 վերջով լայնութիւն ունեցող ձանապարհներով (տես նկ. 1)

Այսպէս բաժանած մէկ քառակուսի սաժէնի վերայ տեղաւորում է 3 մարդ և 2 ձանապարհ: Ամէն մի մարդում տնկելով հատիկները, մէկը միւսից 1 վերջով հեռու, ցանւում է 517 հատիկ, կամ 1 քառակուսի սաժէնի վերայ $517 \times 3 = 1551$ հատիկ: Հատիկները պէտք է ցանել այնպէս, որ մէկ վերջովից խորը չլինի:

Սերմը հաւասարապէս ցանելու համար, գործ են ածում զանազան հասարակ գործիքներ և ամէն մի փորձ անող կարող է ինքը իր հայեցողութեամբ յարմար գործիք գործադրել: Մենք գործադրում ենք բարակ տախտակ, անորոշ երկարութեամբ և 6 վերջով լայնութեամբ, որը ծակծկած է միմեանցից 1 վերջով հեռաւորութեամբ և մի փոքրիկ փայտէ ձողիկ, որի նկ. 2.



կոթը մի փոքր հաստ է, իսկ ծայրը որոշ չափով բարակ (տես նկ. 2):

Այս տախտակը ղնում են մարզի վերայ և հատիկները մէկ-մէկ գցելով անցքերի մէջ, ձողիկով սեղմում են, որով հատիկը որոշ խորութեամբ թաղւում է հողի մէջ՝ ձողիկի բարակ ծայրի չափով, այն է 1 վերջով. այս գործիքով 10 տարեկան երեխան էլ շատ հեշտութեամբ կարողանում է ցանիլ: Սերմը ցանելուց 3 կամ 4 շաբաթ յետոյ, երբ ծիլը ունենում է 2 կամ 3 տերև, շիթիլը տեղափոխում են:


Մինչև շիթիլը հասնելը, փորձին յատկացրած հողաբաժինը վարում են սովորական գործիքներով, կամ եթէ տարածութիւնը փոքր է, քանդում են բահով և այնուհետև տափնում (ցաքանում) են, մակերևոյթը հարթացնելու և կոշտերը մանրացնելու համար: Տափնելուց յետոյ, ամբողջ հողաբաժինը նոյնպէս բաժանում են շերտերի, որոնց երկարութիւնը լինում է կամաւոր, այսինքն արտի երկարութեան չափ, իսկ լայնութիւնը միահաւասար 6 վերջով:

Այդ շերտերը փոփոխակի մէկը տնկում են միւսը թողնում են ազատ, թէ ճանապարհի և թէ հանգստանալու համար, որ միւս տարի ազատ շերտերում տնկեն, իսկ տնկածները թողնում են ազատ և այդպիսով ամէն տարի հողի կէս մասը

հանգստանում է (տես նկ. 3):

Նկ. 3

Պարարտացրած




Շիթիլի տեղը պատրաստելուց յետոյ, հացաբոյսերը հանում են և արմատների վերայ կըպած հողը թափելուց յետոյ՝ դարսում են մի տափակ արկղի մէջ, այնպէս որ բոլոր արմատները լինեն մի կողմը, այդ միջոցին լաւ է եթէ արմատների վերայ ածեն պարարտացնող հիւթ «թոմասչլակ», որի փութը արժէ 40—50 կոպէկ և կարելի է գնել գիւղատնտեսական պահեստներում, իսկ «թոմասչլակը» չեղած դէպքում, կարելի է արմատները ծածկել մի բարակ շերտ հողով, որ արևը չ'չորացնէ:

Ի հարկէ շիթիլը պէտք է հանել տնկողների

պահանջած չափով, որ երկար չ'մնայ օղի մէջ. հանած շիթիլը անկում են շերտերի վերայ—նը- շանակած տեղերում. ամէն մի շերտի վերայ ե- րեք շարք, բոյսը բոյսից 4 վերջով հեռու և այն- քան խորը, որ բոյսի առաջին ոտը 1 վերջով լինի հողի մէջ: Շիթիլի տեղերը կանոնաւոր կերպով նշանակելու համար գործադրում են նոյնպէս ծակծկած տախտակ և մօզուլ (տես նկ. 4):

Նկ. 4.



Մօզուլ



Միայն այս դէպքում ծակերը շինում են աւելի մեծ և մէկը միւսից 4 վերջով հեռու: Մէկը այս տախտակով շերտի վերայ մօզուլով շարունակ նշանակում է տեղերը, սորա յետե- ւից գնում է մի ուրիշը և նշանակած տեղերը նոյնպէս մօզուլով աջ ձեռով ծակում է հողը և ձախ ձեռով բռնած բոյսի ծայրից կախում է արմատները այնքան խորը, որ ոտը 1 վերջով խորը լինի հողի մակերևոյթից և մօզուլի ծայ- րով սեղմելով հողը ծակի մօտ, ծածկում է ար- մատները: Այս գործը նոյնպէս աւելի յաջող կեր-

պով կարողանում են կատարել երկու սեռի պա- տանինները և կանայք: Մէկ վարժւած պատանի կամ կին, կարող է անկել ըստ Դեմչինսկու, 5- ից մինչև 6 հազար շիթիլ օրէկան: Բոլոր վերո- յիշեալ չափերը գործադրում են աշնան ցանքսի ցորենի համար, իսկ գարնան ցանքսի համար այս չափերը կարելի է պակասացնել, այն է շի- թիլը շիթիլից անկել 2 վերջով հեռաւորութեան վերայ:


Աշնան և գարնան ցանքսերը պէտք է սկը- սել տեղական սովորական ժամանակին: Գարնան ցանքսի համար փորձին յատկացրած հողը պէտք է վարել աշնանից: Մենք զեռ նոր ենք սովո- րում, ուստի անկարելի է ընտրել մի օրև իցէ գործնական եղանակ և պնդել, թէ սա է ամենա- լաւ եղանակը, կամ սա է լաւ գործիքը. բազմա- թիւ փորձերը կըստեղծեն մի օրոյ գործնական ե- դանակ և սորան յարմարեցրած ամենայարմար գործիքները: Յորենի շիթիլի բազմաթիւ փորձե- րը ապացուցանում են, որ մէկ զեսեատինից միջին թուով ստացւում է 320 փութ, ուրեմն այդ բերքը ստանալու համար արժէ գործել և չը- վախենալ ըստ երևոյթին դժւար, բայց իսկապէս շատ հեշտ և առանց կողմնակի ծախքերի, շի- թիլի աշխատանքից:

Բ. ՀԱՅՍՏԱՆԻ ԲՈՒԳԸ ԼՅՆԵԼԸ: (Օռչրատանի)

Տասնեակ զեսեատին պարունակող արտե-

ըում շիթիլ անելը անյարմար է և համարեա թէ անկարելի, որովհետև շատ դժւար է այդքան մեծ տարածութեան վերայ շիթիլ անկելու համար համապատասխան քանակութեամբ բանւորներ ճարել, ուստի այն անձինք, որոնք ցանկանում են մշակել 2 կամ 3 դեսեատինից աւելի հողեր և այնուամենայնիւ ի նկատի ունեն ուժեղացնել հացաբոյսի արմատը, խորացնելով նորա առաջին ոստը, այդ դէպքում գործադրում են բուզը լցնելը, ինչպէս անում են կարտոֆիլի համար: Բուզը լցնելու համար արտը նոյնպէս վարելուց և տափնելուց յետոյ՝ բաժանում են շերտերի: Շերտերը համահաւասար բաժանելու համար գործ են ածում «Маркер» գործիքը, որը շինուած է փայտից և որոշ տարածութեան վերայ փոցիի նման առաջներ ունի (տես նկ. 5):

Նկ. 5.



Այս գործիքով բարակ խազեր քաշելով, բաժանում են արտը 6 վերջուկ լայնութեան շերտերի, որից յետոյ ծակծկած տախտակի միջոցով

ցանում են ցորենի հատիկները, մատով կամ փայտի ծայրով (տես նկար 4.) խորացնելով հատիկները հողի մէջ՝ 1 վերջուկից ոչ աւել: Հատիկները դասաւորում են շերտի վերայ, 4 վերջուկ հեռու մէկը միւսից: Ցանելուց 3 կամ 4 շաբաթ յետոյ, երբ բոյսը բաւականին կը բարձրանայ, շարքերի միջնավայրի հողով ծածկում են բոյսերի ստորին մասը, մօտաւորապէս մէկ վերջուկ հաւաստութեամբ հողի շերտով: Այդպիսով բոյսի առաջին ոստը ծածկւում է հողով և տալիս է նոր արմաաներ: Եթէ եղանակը շարունակ չօրային է, բուզը լցնելը 3—4 շաբաթից յետոյ հարկաւոր է կրկնել: Ամենից լաւ է կատարել այդ գործը յատուկ գործիքով, որին ուսուերէն անւանում են окучникъ. սրա փայտից շինածը արժէ 7 ըուբլի, իսկ երկաթիցը 14 ըուբլի:

Վերջացնելով մեր համառօտ տեսութիւնն ու հրահանգը, աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ մէկ դեսեատին հողի վրայ մարգերի, թփերի, սերմացուի և այլն մասին մի քանի թուէր:

1. Մէկ դեսեատինի (2 օրավար) 2400 քառ. սաժ. (60 սաժ. երկարութիւնն և 40 սաժ. լայնութիւնը) մէջ շիթիլը անկելու համար, հարկաւոր է 36 ֆունտ (գրւանքայ) ցորեն, հաշւելով 100 հատիկը մէկ մսխալ:

2. Ամէն մէկ ցանած շերտի լայնութիւնը

12 վերջով և ամէն չցանած միջանցքը 6 վերջով հաշւելով, քառակուսի սաժէնում վերայ կուսենանք 3 մարդ և 2 միջանցք: Այդ տեսակ ամէն մէկ մարդում, հատիկը — հատիկից 1 վերջով հեռու ցանելով, տեղաւորուում է 517 հատիկ, ուրեմն ամէն մի քառակուսի սաժէնում այսինքն 3 մարդում 517.3 = 1551 հատիկ:

3. 80 սաժէն երկարութիւն և 30 սաժէն լայնութիւն ունեցող մէկ դեսեատինը, շիթիլի համար 6 վերջովանոց շերտերի վերայ բաժանելով կրստանանք 240 շերտ, որից 120 շերտի վերայ շիթիլ կտնկուի, և 120 շերտ էլ կմնայ միջանցքի համար: Ամէն մի այդպիսի շերտում երեք կարգ շիթիլ տնկելով, ամէն մէկ շիթիլի թուփը միւսից 4 վերջով հեռաւորութեամբ, կտեղաւորի 2880 թուփ, իսկ ամբողջ դեսեատինը, այսինքն 120 շերտը բազմապատկած 2880-ի վերայ կրստանանք 345,600 թուփ (2880.120 = 345,600):

4. 345,600 շիթիլի տունկ ստանալու համար, հարիւր հատիկը մէկ մսխալ հաշւելով, հարկաւոր է ցանել 36 ֆունտ, բայց ի նկատի ունենալով սերմացուի մէկ մասի ծլելու անընդունակութիւնը և շիթիլի տեղափոխութեան ժամանակ, մի բաժնի էլ փչանալը, պիտի ցանել մի քիչ շատ 37—38 ֆ., մինչև անգամ 1 փութ:

5. 37 ֆունտ ցորենը ցանելու համար, որ անում է 355,200 հատիկ և հաշւելով, ինչպէս


վերնն էլ ասացինք, քառակուսի սաժէնում 1551 հատիկ, պիտի պատրաստել 230 քառակուսի սաժէն հոգարածին:

6. Ենթադրաբար հաշւելով, որ ամէն մէկ թուփը միջին թուով տալիս է 10 հասկ և ամէն հասկում 20 հատիկ, թփից կ'ստանանք 200 հատիկ, իսկ 345,600 թփից կ'ստանանք 69,120,000 (345,600. 200 = 69,120,000) Հաշւելով 100 հատիկը մէկ մսխալ կ'ստանանք 691,200 մսխալ կամ 7200 ֆունտ, որ կանէ 180 փութ 32 ֆ.:

Արդիւնքի մասին մեր արած հաշւում վերցրինք ամենափոքր թւերը, թէպէտ մեր անձնական և Ռուսաստանում արած բազմաթիւ փորձերը տուել են մի քանի անգամ աւելի մեծ թւեր:

Աւելորդ չենք համարում, այստեղ դնել սովորական ցանքսի և նոր տեսակի, մէկ դեսեատին հողը մշակելու ծախսերի և այդ երկու տեսակից սպասելիք մուտքերի գուզակշիւրը: Նոր տեսակի ծախսերը վերցնում ենք ամենաշատը, իսկ արդիւնքն ամենաքիչը:

1001



Մոլորական տեսակի			Նոր սխառների				
№	Օտիւրը	ր. կ.	№	Օտիւրը	ր. կ.		
1	Սերմաց. Եփ. 1ր. 60կ.	12	80	1	Սերմ. 1 փ. 1ր. 60կ.	1	60
2	Վարելը գոթանով	11	"	2	Սերմը. ցանկերու հա-	"	"
3	Ցանկերէն արփնելը	3	"	3	վար նաւանձին 230.	"	"
4	Հնձելը	4	"	4	քանուած տեղ պատ-	"	"
5	Կրելը 3 կայլ	2	"	5	քանուած փոթերու և	"	"
6	Վեպնելը	3	"	6	փոթերու 3մկ. 50կ.	"	"
				7	Սերմը. ցանկերու 10	1	50
					պատանի կամ կին	"	"
					օրեկան 20 կուս	2	"
				4	Շիթիլ տեղը պատ-	"	"
					քատ. 1 գնու հողը	"	"
					արօրով վարելը, տափ	"	"
					անելը և շերտերի	"	"
					բաժնիները	10	"
				5	Շիթ, տնկ. 60 պատ.	"	"
					կամ կին. օր. 20 կ.	12	"
				6	Հնձելը	18	"
				7	Կրելը	10	"
				8	Կալսելը	15	"
	Գումարը	35	80	Գումարը	70	10	
	Մուտքը			Մուտքը			
1	ցոր. 40-60փ. 1ր. 60կ.	01/08		Ցոր. տեխնապակասը		288	
2	Դարման 40 փ. 20 կ.	8		180 փ.			
	Գումարը	71/101		2	Դարման 180 փութ	36	
					Գումարը	234	
	Զուտ արգիւնը 68 ր. 20 կ.				Զուտ արգիւնը 253 ր. 90 կ.		

Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան հողային սեկցիան հրատարակելով սոյն գրքայի ր առաջարկում է գիւղացիներին հացահատիկների նոր ձևի մշակման մի փորձնական ձեռնարկ, խնդրելով ամենայն ուշադրութեամբ և ճշտու կատարել փորձին վերաբերեալ բոլոր աշխատանքները և պայմանները, որը վերջացնելուց յետոյ կատարւած փորձերի հետևանքների մասին, ստորև կցած հարցերի մանրամասն պատասխանները գրել և ուղարկել հողային բիւրօյին, որպէսզի այդ տեղեկութիւնները ի մի հաւաքելուց հնարաւոր լինի անպաշտօնում — բազմաթիւ փորձերի համեմատութիւնից մի ամփոփ և լիակատար ու լիայոյս ժողովածու կազմել մարզային կուլտուրայի մասին:

ՀՍՐՑ

I. Ինչպէս է պատրաստել շիթիլանոցը.

1. Ո՞րքան տեղ է բռնում (երկարութիւնը և լայնութիւնը կամ որքան քառակ. տեղ է):
2. Ի՞նչպէս են պատրաստել մարգերը շիթիլի համար: (Քանով թէ արօրով):
3. Ի՞նչպէս է հողը մշակած և մարգերի մեծութիւնը. (պարարտացրած է հողը թէ ոչ):
4. Ի՞նչպէս է դանւած սերմը և երբ. (հատ հատ թէ ցրուելով կամ սերմելով, որքան արանքներ են թողած և ուրքան խոր է թաղւած սերմը):
5. Ցանած ցորենի քաղը կամ հատիկների քանակը—

II. Ինչպէս է պատրաստուած արօր

1. Քանի անգամ է վարած հողը—

2. Ե՞րբ, ինչո՞վ և ի՞նչ խորութեամբ է վարած (հերկած) հողը:

3. Հողը պարարտացրած է թէ ոչ, եթէ պարարտացրած է, ի՞նչպէս և ի՞նչով ի՞նչ քանակութեամբ:

Ի՞նչպիսի հող է արաի հողը (կաւային—տւազօտ—սև... և այլն).

Եթէ շիթիլ արած չէ—ցորենի բուզը լցրած է թէ չէ և ե՞րբ, քանի՞ անգամ և ինչո՞վ...

Ի՞նչ է եղել ցանած այնտեղ նախորդ տարին.

Ե՞րբ և ինչո՞վ է տափնած (ցաքանած հողը.)

Ե՞րբ է ծլել բոյսը.

Ջրե՞լ է թէ ոչ.

Ե՞րբ է հասել.

Թուփը մօտ քանի՞ հասկ է տուել.

Հասկերի երկարութիւնը...

Ե՞րբ և ինչո՞վ է հնձուած արտը.

Ե՞րբ և ինչո՞վ է կարուած.

Ո՞րքան աշխատանք և սրքան ծախս է գործադրուել.

Ո՞րքան արդիւնք է ստացուած.



Լեռնային է տեղը թէ դաշտային.

Անձրեային թէ չորային տեղ է.—

Ձմեռը խիստ է թէ մեղմ —

Ձմեռը սրքան ժամանակ է տեղի:

Ձիւնը շատ է եղել թէ քիչ. և այլ նման տեղեկութիւններ տեղի և կիսմայի մասին:



18733